**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ**

---

**ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ**

**ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Քաղ. Երևան 21 փետրվարի 2020 թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Գյուլումյանի
Անդամակցությամբ՝ Ա. Խաչատրյանի
Հ. Նազարյանի

Քննության առնելով Ռազմիկ Հովհաննիսյանի և Գոռ Չոբանյանի
անհատական դիմումի ընդունելիության հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Ռազմիկ Հովհաննիսյանը և Գոռ Չոբանյանը դիմել են Սահմանադրական դատարան (դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2020 թվականի փետրվարի 3-ին)՝ խնդրելով.

«.... 2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածը և դրա հետ փոխկապակցված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 204-րդ հոդ-վածը իրավակիրառական պրակտիկայում տրված այն մեկնաբանությամբ, ըստ

որի՝ անձին որպես մեղադրյալ ներգրավելը, նախկինում առաջադրված մեղադրանքի փոփոխումը և լրացումը հնարավոր են նաև այն հանցագործություններով, որոնց հատկանիշներով քրեական գործ չի հարուցվել, և մեկ հանցագործության դեպքով հարուցված քրեական գործի շրջանակներում կարելի է անձին որպես մեղադրյալ ներգրավել այլ հանցագործություններ կատարելու համար՝ առանց այդ հանցագործությունների դեպքերով նոր գործեր հարուցելու, ճանաչել ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 75-րդ և 81-րդ հոդվածներին հակասող և անվավեր.

3. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածն այն մասով, որ չի նախատեսում քրեական գործ հարուցելու մասին որոշման իրավաչափությունը վիճարկելու դեպքում դատավճիռ կայացնելիս այդ հարցը պարտադիր լուծելու հնարավորություն, ճանաչել ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 75-րդ հոդվածին հակասող և անվավեր.

4. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածն այն մասով, որ չի նախատեսում քրեական գործ հարուցելու մասին որոշման իրավաչափությունը վիճարկելու դեպքում դատավճռի նկարագրական-պատճառաբանական մասում այդ հարցի կապակցությամբ դատարանի պատճառաբանված հետևությունը պարտադիր ցույց տալու հնարավորություն, ճանաչել ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 75-րդ հոդվածին հակասող և անվավեր.

5. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը իրավակիրառական պրակտիկայում տրված այն մեկնաբանությամբ, ըստ որի՝ իր դեմ ցուցմունք տվող անձանց ցուցմունքներն արդյունավետ վիճարկելու հնարավորության բացակայության դեպքում նշված անձանց ձևականորեն հարցեր ուղղելու հնարավորություն ապահովելով այդ ցուցմունքները չպետք է անթույլատրելի ապացույցներ դիտվեն, ճանաչել ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին, 67-րդ հոդվածի 4-րդ կետին, 75-րդ և 81-րդ հոդվածներին հակասող և անվավեր.

6. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 334-րդ հոդվածն այն մասով, որ չի նախատեսում մեղադրանքի բնույթի և հիմքի մասին ամբաստանյալին հանգամանորեն տեղեկացնելու իմպերատիվ պահանջ, ճանաչել ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 67-րդ հոդվածի 1-ին կետին, 75-րդ և 81-րդ հոդվածներին հակասող և անվավեր»:

2. Դիմողները նշում են, որ վիճարկվող օրենսգրքի 202-րդ հոդվածը և դրա հետ փոխկապակցված 204-րդ հոդվածը թեև դատական ակտերում չեն վկայակոչվել և չէին կարող վկայակոչվել, քանի որ վերաբերում են մինչդատական վարույթին, իսկ դատարանը քրեական գործի ըստ էության քննության ժամանակ (եթե դատարանում մեղադրանքը չի փոխվում դատախազի կողմից) պարզում է մինչդատական վարույթում անձին առաջադրված մեղադրանքի օրինականությունը և հիմնավորվածությունը, փաստացի կիրառվել են իրենց նկատմամբ, քանի որ այդ հոդվածների կիրառմամբ առաջադրված մեղադրանքները հիմնավոր են համարվել վերջնական դատական ակտով: Դիմողները համոզված են, որ նշված հոդվածները իրենց նկատմամբ կիրառվել են այնպիսի մեկնաբանությամբ, որը հակասում է Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 75-րդ և 81-րդ հոդվածներին:

Ըստ դիմողների՝ քննության առարկա օրենսգրքի 360-րդ և 371-րդ հոդվածներում առկա է **օրենսդրական բաց**, որը հանգեցրել է հակասական իրավակիրառական պրակտիկայի ձևավորման, և խախտվել են դիմողների դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները: Նշված հոդվածներում բացակայում են քրեական գործ հարուցելու մասին որոշման իրավաչափությունը վիճարկելու երկու իրավակարգավորումներ. առաջին՝ դատավճիռ կայացնելիս դատարանը պետք է որոշի արդյոք քրեական գործը հարուցված է օրենքի պահանջների պահպանմամբ, և երկրորդ՝ դատավճռի նկարագրական–պատճառաբանական մասում պետք է ցույց տրվի այդ կապակցությամբ դատարանի պատճառաբանված հետևությունը:

Դիմողները գտնում են, որ քննարկվող օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով հիմնարար իրավունքի խախտմամբ ձեռք բերված ապացույցները պետք է համարվեն անթույլատրելի: Նման պայմաններում թեև դատարանի կողմից ձևական առումով ապահովվում է հակընդդեմ հարցման իրավունքը՝ հնարավորություն է տրվում հարց ուղղել մեղադրյալի դեմ ցուցմունք տվող անձին, սակայն փաստացի մեղադրյալը զրկվում է այդպիսի ցուցմունքները արդյունավետ վիճարկելու, այն է՝ իր դեմ տրված վկայությունների ճշմարտացիությունն ու վստահելիությունը կասկածի տակ դնելու հնարավորությունից:

Դիմողները պնդում են, որ ո՛չ օրենքով, ո՛չ էլ դատական պրակտիկայում մինչ օրս որոշակիացված և հստակեցված չէ «մեղադրանքի էություն» հասկացությունը և վիճարկվող օրենսգրքի 334-րդ հոդվածում առկա է օրենսդրական բաց, այն է՝ չի ապահովվում Սահմանադրությամբ երաշխավորված՝ մեղադրանքի բնույթի և հիմքի մասին հանգամանորեն տեղեկացվելու մեղադրյալի իրավունքը, ինչի արդյունքում ձևավորվել է հակասական պրակտիկա: Ըստ դիմողների՝ առաջին ատյանի դատարանը այն կիրառել է, պարզաբանել է դիմողներին ներկայացված մեղադրանքի էությունը, սակայն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին հանգամանորեն չի տեղեկացրել՝ վկայակոչելով քրեադատավարական օրենքով նման պարտականության բացակայությունը:

3. Ելնելով դիմումի, կից ներկայացված դատական ակտերի և այլ փաստաթղթերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ դիմումի ակնհայտ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի՝ անհատական դիմումներով գործի քննությունը, ի լրումն նույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է:

Սահմանադրական դատարանի 2009 թվականի նոյեմբերի 24-ի ՍԴՈ-839 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների՝ անհատական դիմումին ներկայացվող հիմնավորվածության պահանջը նշանակում է, որ դիմողը պետք է փորձի բավարար կերպով հիմնավորել, թե իր սահմանադրական ո՞ր իրավունքներն են խախտվել, և ի՞նչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող իրավադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև: Այս համատեքստում վիճարկվող դրույթների վերաբերյալ դիմողների ներկայացրած փաստարկներն ակնհայտ անհիմն են, քանի որ առկա չէ պատճառահետևանքային կապ դիմողի խախտված իրավունքների և վիճարկվող նորմերի ենթադրյալ հակասահմանադրականության միջև, ինչն էլ, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի և Սահմանադրական դատարանի ՍԴՈ-839 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման, անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

**Ո Ր Ո Շ Ե Ց.**

Ռազմիկ Հովհաննիսյանի և Գոռ Զոբանյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

21 փետրվարի 2020 թվականի
ՍԴԴԿՈ-10